ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2020թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

«ԵՐԿԻՐ.ԱՄ» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվականի փետրվարի 2-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 0695) Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ 2018 թվականի մայիսի 9-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մարզպետարանի աշխատակիցներին վճարված պարգևավճարների չափի մասին տեղեկատվություն չենք կարող տրամադրել, քանի որ աշխատակազմում կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Ինչպես նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող տրամադրվել:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95